



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**«ՀԱՅ ԼԵՉՈՒԻ ՏԱՐՈՒԱՆ» ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
 ՊԱՏԳԱՄԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Մեր հաւատացեալ ժողովուրդը ծանօթ է, որ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Հայրապետական պատգամով մը 2007 տարին հռչակած է Հայ Լեզուի Տարի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինութեամբ, Կիրակի, 25 Փետրուարին, յընթացս Ս. Պատարագի, Հայրապետական պատգամը մեր եկեղեցիներուն մէջ պիտի ընթերցուի Հոգեւոր Հովիւներուն կողմէ եւ մեր հաւատացեալ ժողովուրդը հաղորդ պիտի դառնայ Վեհափառ Հայրապետի մտածումներուն ու յորդորներուն:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Կլենտոյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի փոխանցէ Վեհափառ Հայրապետին պատգամը:

**PONTIFICAL MESSAGE OF H.H. ARAM I ON THE YEAR OF THE
 ARMENIAN LANGUAGE TO BE READ IN PRELACY CHURCHES**

As you know, H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, has declared 2007 to be the year of the Armenian language.

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, during Holy Mass on Sunday, February 25th, the Pontifical Message of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, on 2007 as the Year of the Armenian Language will be read in all Prelacy churches.

The Prelate will preside over Mass at St. Mary's Church in Glendale and convey the message of His Holiness to the faithful.

**ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ՝ ՀՕՄԻ ՆՆՋԵՑԵԱԼ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ
 ԵՒ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

ՀՕՄԻ Շրջանային Վարչութեան խնդրանքով ու Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինութեամբ, Կիրակի, 25 Փետրուարին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՀՕՄԻ բոլոր ննջեցեալ անդամներուն ու բարերարներուն հոգիներուն համար:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով յայտնեց, թե կ'օրհնէ յիշատակը ՀՕՄԻ բոլոր ննջեցեալ ծառայողներուն ու բարերարներուն, »ծառայողներ՝ որոնք մասնակից եղած են շուրջ 100ամեայ այս կազմակերպութեան մարդասիրական, բարեսիրական, կրթանուէր ու հայրենակերտ գործին, նկատի ունենալով, որ առաւելաբար Սփիւռքի պայմաններուն մէջ գործած ՀՕՄԻ ծառայութիւնները վերջին 15 տարիներուն ընդգրկեցին նաեւ Հայաստանը, Արցախն ու Ջաւախքը«:

REQUIEM SERVICE FOR MEMBERS OF THE ARMENIAN RELIEF SOCIETY

On Sunday, February 25th, by the request of the A.R.S. Regional Executive and the ordinance of the Prelate, requiem service will take place in all Prelacy churches for the souls of departed A.R.S. members and donors.

On this occasion, the Prelate blesses the memory of all past A.R.S. volunteers and donors who contributed to the benevolent mission of the organization.

«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ՍԱՆԹԱ ԲԼԱՐԱՅԻ ՄԷՋ

Սան Ֆրանսիսքոյի մօտակայ Սանթա Բլարա քաղաքի հայութեան ու յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի կազմին համար, Կիրակի, 25 Փետրուարը, յիշատակելի օր մը պիտի ըլլայ:

Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանի տուչութիւն պիտի կատարուի Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Բլարայի «Անի» Մասնաճիւղի սկաուտներուն, որոնք յաջողութեամբ աւարտած են Ազգ. Առաջնորդարանի Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանի ծրագիրը եւ պատրաստ են ստանալու իրենց շքանշանները, որոնք իրենց տարազներուն վրայ պիտի կրեն սկաուտական միւս նշաններուն կողքին:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան ներկայ պիտի ըլլայ արարողութեան եւ պիտի կատարէ շքանշաններու օրհնութիւնն ու տուչութիւնը:

15 սկաուտներ պիտի արժանանան Ս. Մեսրոպ Մաշտոց սկաուտական շքանշանին:

Յայտնենք որ, Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Խորհուրդին նախաձեռնութեամբ ու գործակցութեամբ Ազգ. Առաջնորդարանին ու Ամերիկայի Սկաուտական Շարժումին, Ս. Մեսրոպ Մաշտոց Շքանշանի թեկնածու սկաուտներն ու արեւուշները կը հետեւին յատուկ դասախօսութիւններու, բանակումի, արշաւի եւ հաւաքական աղօթքի: Այս ծրագիրը կը նպատակադրէ թեկնածուներուն փոխանցել Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ուսուցմունքները եւ առաքելութիւնը: Ծրագրին մասնակցող սկաուտները կ'ուխտեն մասնակից դառնալ եւ ծառայել հայ եկեղեցւոյ հոգեւոր եւ մշակութային ժառանգութեան ու պահապան կանգնիլ անոնց:

PRESENTATION OF ST. MESROB MASHDOTS SCOUT MEDAL TO SANTA CLARA HOMENETMEN SCOUTS

On Sunday, February 25th, 15 scouts from the Santa Clara Homenetmen “Ani” Chapter who have successfully completed the St. Mesrob Mashdots program will be presented with medals during Holy Mass. By the ordinance of the Prelate, Very Rev. Fr. Barthev Gulumian will conduct the blessing and presentation of the St. Mesrob Mashdots medals.

ԹԵՄԻՍ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱՔ

Շաբաթ, Փետրուար 24-ին, Կլենտոյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի պիտի ունենայ Թեմիս Կիրակնօրեայ վարժարաններու ուսուցչական կազմերու միօրեայ հաւաքը, հովանաւորութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Համագումարը կազմակերպուած է Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքին կողմէ: Գլխաւոր նիւթն է՝ Մեծ Պահոց համակարգը:

Նիւթը պիտի ներկայացնեն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, որոնք տեսական եւ գործնական լուսաբանութիւններ եւ ցուցմունքներ պիտի տան Մեծ Պահոց Կիրակի օրերու նիւթերը հետաքրքրական դարձնելու համար:

Հայր Միւռն պիտի ներկայացնէ իւրաքանչիւր Կիրակիի Աստուածաշնչական իմաստը, իւրաքանչիւրին մասին տալով բացատրութիւններ ու զանոնք առնչելով մեր առօրեայ կեանքին: Հայր Պարթեւ Մեծ Պահոց իւրաքանչիւր Կիրակի օրուան յատուկ շարականները պիտի ներկայացնէ ուսուցիչներուն, որպէսզի անոնք ալ իրենց կարգին աշակերտներուն սորվեցնեն:

SUNDAY SCHOOL TEACHERS SEMINAR ON LENT

The Prelacy Christian Education Department, under the auspices of the Prelate, has organized a one-day seminar for Sunday School teachers to take place on Saturday, February 24th, at the hall of St. Mary's Church in Glendale.

Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian will offer suggestions on teaching techniques with regards to the Sundays of Great Lent. Hayr Muron will explain the Bible readings of each Sunday of Lent and how they relate to our lives today, while Hayr Barthev will present and teach the hymns of each Sunday of Lent.

**ՄԵԾ ՊԱՅՔԻ ՄԱՍԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ**

Կազմակերպութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան, Շաբաթ երեկոյեան, ժամը 6-ին, դասախօսութիւն մը տեղի պիտի ունենայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենական Տէր Պետրոսեան» սրահին մէջ, Նիւթ ունենալով՝ «Մեծ Պահքը 21-րդ դարու երիտասարդին համար»: Դասախօսն է Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

LECTURE ON LENT AT ST. MARY'S CHURCH

On Saturday, February 24th, the St. Mary's Church youth association has organized a lecture on "Lent and the 21st Century Youth". Very Rev. Fr. Barthev Gulumian will present this topic at the "Armenak Der Bedrossian" hall of the church at 6:00 p.m. A question and answer session will follow the lecture.

ՄԵԾ ՊԱՅՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը ամեն տարի կ'ունենայ Մեծ Պահքի ճաշկերոյթ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին:

Այս տարի ձեռնարկը տեղի պիտի ունենայ Զորեքշաբթի, Փետրուար 28-ին, Արեւագալի ժամերգութենէն ետք, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ: Պիտի ներկայացուի գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Տիկնանց Օժանդակ Մարմինը պիտի հրամցնէ պահքի յատուկ ճաշեր:

Ժամերգութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազանը պիտի փոխանցէ իր պատգամը:

PRELACY LADIES AUXILIARY ANNUAL LENTEN LUNCH

Each year during Lent, the Prelacy Ladies Auxiliary organizes a Lenten luncheon under the auspices of the Prelate.

This year, the luncheon will take place on Wednesday, February 28th, at the hall of St. Mary's Church in Glendale, following morning services during which the Prelate will deliver the sermon.

ԿԱՆԱՆՑ ԶԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՂՕԹՔԻ ՕՐ

Ուրբաթ, Մարտ 2-ը Կանանց Զամաշխարհային Աղօթքի Օր է. ամեն տարի այս օրը կը նշուի միօրեայ աղօթքով եւ յատուկ ծրագիրով:

Այս տարի, աղօթքի այս հաւաքը տեղի պիտի ունենայ Զայ Նազովրեցի եկեղեցւոյ մէջ, Փասատինա, կ.ա. ժամը 11-էն սկսեալ: Առաջնորդ Սրբազան Զայրը պիտի ընդառաջէ իրեն ուղղուած հրաւերին, ներկայ պիտի ըլլայ աղօթքին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:

WOMEN'S INTERNATIONAL DAY OF PRAYER

Each year, Women's International Day of Prayer is celebrated with a special program. This year, the event is scheduled to take place on Friday, March 2nd, at 11:00 a.m., at the Armenian Church of the Nazarene in Pasadena. The Prelate will attend the prayer service and convey his blessings.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](#) - 6252 Honolulu Ave, La Crescenta, Ca 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.

If you wish to be removed from [Western Prelacy of the Armenian Church of America](#) mailing list, please send email to: info@westernprelacy.org and asked to be removed.